



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ**

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ**

Հետազոտության թեման՝ Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը սովորողների հոգեբանական զարգացման գործում

*Առարկան՝ կենսաբանություն
Հետազոտող ուսուցիչ՝ Յարալուվա Նատայա*

Ուսումնական հաստատություն՝ Ալ. Բլոկի անվան հ. 122 հիմնական դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ	
Գլուխ 1	
Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաները և դրանց տեսակների կիրառումը կրթական համակարգում	
1.1 Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաները և դրանց տեսակները.....	5
1.2 Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը ուսուցման գործընթացում.....	8
Գլուխ 2	
SS-ի ազդեցությունը սովորողների հոգեբանական զարգացման վրա և դրանց բացահայտումը ուսուցման գործընթացում	
2.1 Դպրոցահասակների անձի զարգացման հիմնական օրինաչափություններն ու առանձնահատկությունները.....	10
2.2 Սովորողների հոգեբանական զարգացման վրա SS-ի դրական և բացասական ազդեցությունների գնահատում և նախազգուշացնող միջոցառումների կազմակերպում.....	12
Առաջարկություններ.....	16
Եզրակացություն.....	17
Օգտագործված գրականության ցանկ.....	18

Ներածություն



Թեմայի արդիականությունը: Ժամանակակից հասարակության մեջ թվային տեխնոլոգիաները և համացանցը կապված է երիտասարդների ընթացիկ կյանքի ոլորտներից յուրաքանչյուրի հետ: Ձևավորվող թվային միջավայրում ստեղծվում է բարձր տեխնոլոգիական ենթակառուցվածք, տեղի է ունենում փոփոխություններ տնտեսական հարաբերություններում, փոխվում է քաղաքացիների և իշխանությունների փոխազդեցությունը, ինչը ազդում է սովորողների անհատականության զարգացման վրա, փոխակերպում նրա սոցիալական հարաբերություններ և հոգեբանություն: Մեղիա տեխնոլոգիաների և համացանցի տարածումը հնարավորություն է տալիս SS-ն օգտագործել որպես հաղորդակցության, կրթության և համաշխարհային հանրությանը ինտեգրվելու միջոց: Տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը զգացվում է և սովորողի անձի հոգեբանական զարգացման, նրա մասնագիտական ինքնորոշման ու ինքնակազմակերպման վրա: Տեղեկատվական դարաշրջանում կրթության բնույթի մեջ կատարվող արմատական փոփոխությունը սերտորեն առնչված է տեղեկատվության և հաղորդակցության արդի միջոցների զարգացման և տարածման հետ: Եվ կրթությունը, որպես մշակույթի համակարգում հանդես եկող առանձնահատուկ գործունեություն, բնականաբար չի կարող հեռու մնալ այս գործընթացից:

Հետազոտության նպատակը-

- զարգացնել աշակերտների կողմից տեղեկատվական տեխնոլոգիաների նպատակային կիրառման կարողությունները

- Բացահայտել դրանց հետագա դրական և բացասական ազդեցությունները սովորողների հոգեբանական զարգացման գործընթացում:

Հետազոտության խնդիրները.

- Ուսումնասիրել նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների տեսակները և դրանց ազդեցությունները սովորողի հոգեբանական զարգացման գործում:
- Կիրառել մեդիակրթական տեխնոլոգիան կենսաբանության ուսուցման գործընթացում և գնահատել SS գործընթացների օգտագործման դրական և բացասական կողմերը:

Հետազոտության մեթոդները.

- գրական տվյալների հավաքագրում և ուսումնասիրում,
- գնահատում,
- մանկավարժահոգեբանական վերլուծության մեթոդ,
- հարցման և դիտման մեթոդ:

Աշխատանքի տեսական նշանակությունը

- կարելի է կիրառել հետևյալ ոլորտներում. «Ընտանիքի հոգեբանության», «Մանկավարժության», «Ինֆորմատիկայի» և այլ առարկաների ուսուցման գործընթացում, կրթական կառույցներում SՀS-տեխնոլոգիաների ճիշտ և առանց խնդրի օգտագործման համար:

Վարկած1.

Երեխաների ուսումնական պրոցեսում օգտագործվող SՀS տեխնոլոգիաները կարող են դրական կամ բացասական անբաղաձեռնալ սովորողների հոգեբանական զարգացման վրա:

ԳՐԱԿԱՆ ԱԿՏԱՐԿ

Գլուխ 1

Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաները և դրանց տեսակների կիրառումը կրթական համակարգում

1.1 Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաները և դրանց տեսակները

Ներկայումս զանգվածային լրատվամիջոցներում, մասնագիտական գրականության մեջ տարածված են «համացանցից կախվածություն», «համակարգչային կախվածություն» եզրույթները, սակայն դրան զուգահեռ կիրառվում են նաև այլ հասկացություններ, օրինակ՝ համացանցի խնդրահարույց օգտագործում, համացանցի չարաշահում, վիրտուալ կախվածություն, համացանցային կոմպուլսիվ վարքագիծ և այլն: Համակարգչային կախվածության թվացյալ անանունությունը նույնպես հրապուրիչ կողմ է դպրոցականների համար, ինչը նրանց թույլ է տալիս ներգրավվել այնպիսի վարքագծերում, որոնք այլապես անհասանելի են իրական կյանքում: Համացանցային հաղորդակցության ուրույն հնարավորությունները առցանց շփվողներին թույլ են տալիս սոցիալական առումով ավելի հաջողակ լինել առցանց ռեժիմում, քան առերես շփման ժամանակ:

Համակարգչային կախվածությունը աստիճանաբար ձևավորված վիրտուալ հիվանդություն է, որը հեռացնում է անհատի պահանջներից այն ամենը, ինչ չի վերաբերում նրա նախընտրած գեաղմունքին՝ համակարգչին:

Ըստ Բելավինի՝ համակարգչային կախվածությունը լուրջ խնդիր է, որն ունի հետևյալ նախադրյալներն ու ախտանշանները:

Երեխան սահմանված ժամանակից ավելի շատ է տրամադրում համակարգչին և համակարգչային խաղերին:

Հրաժարվում և չի կատարում կենցաղային և սեփական պարտականություններին կից աշխատանքները՝ հավաքել ննջասենյակը, դասավորել պահարանը, ճաշելուց հետո հավաքել սպասքը, և այլն:

- Երեխան համակարգչի դիմաց նստելը գերադասում է ցանկացած շփումից, ընտանեկան տոնակատարություններից և հասակակիցների հետ խաղերից:

- Նույնիսկ ճաշելիս կամ լոգանքի ժամանակ նա ակտիվ է սոցիալական էջերում:
- Երբ անջատում եք համակարգիչը, նա ինտերնետն ակտիվացնում է բջջայինի միջոցով:
- Անընդհատ ինտերնետային կայքերում ձեռք է բերում նոր ընկերներ:
- Համակարգչի դիմաց անցկացրած ժամանակն աստիճանաբար սկսում է ազդել ուսուցման, ուսումնական առաջադիմության, կենտրոնացվածության վրա:
- Երբ բացակայում է ինտերնետային կապը, երեխաները կամա-ակամա դառնում են ավելի դյուրագրգիռ և ագրեսիվ:
- Երբ չկա ինտերնետային կապը, երեխան չի կարողանում մեկ այլ գործողություն կատարել:
- Որպես կանոն, երեխայի ուշադրությունը գրավում են տեղեկատվության այնպիսի տեսակները, որոնք նա չի կարող ստանալ ծնողներից: Անբարոյականությունը, որը հեշտ հասանելի է համացանցում, ամուր և խորը կարող է նստել երեխայի գիտակցության մեջ: Համացանցային կախվածության հետևանքով վերջին տարիներին կտրուկ սկսել է նվազել գրագիտության աստիճանը: :

Այսօր սմարթֆոնների դերը մարդու կյանքում դժվար է գերազնահատել: Նրա շնորհիվ դուք միշտ կարող եք կապ հաստատել արտաքին աշխարհի հետ, զանգահարել ձեր ծնողներին, ընկերներին: Ամենամեծ պատճառներից մեկը, որ ծնողները սովորաբար բջջային հեռախոսներ են գնում իրենց երեխաների համար, անվտանգությունն է: Եթե երեխաները բջջային հեռախոս ունեն իրենց հետ, շատ ավելի հեշտ է նրանց հետևել և իմանալ, որ նրանք ապահով են: Սմարթֆոնները ի շնորհիվ մենք ավելի պատասխանատու ենք դառնում: Կարող ենք օգտվել նաև հեռախոսի լրացուցիչ գործառնություններից՝ հաշվիչ, ինտերնետ, երաժշտություն, զարթուցիչ օրացույց և այլն: Ժամանակակից բջջային հեռախոսները կոմպակտ են և բազմաֆունկցիոնալ: Մինչև վերջին ժամանակները պաշտպանական հաղորդագրություններում նշվում էր, որ բջջային կապի սարքերը բացարձակապես անվնաս են դրանցից օգտվողների համար և լիովին համապատասխանում են բոլոր անհրաժեշտ չափանիշներին: Սակայն վերջին տասնամյակում առաջավոր բժշկական կենտրոններում ուսումնասիրվում է բջջային հեռախոսներից արձակվող

Ճառագայթների ազդեցությունը մարդկանց առողջության վրա: Օրավուր մեծանում են սմարթֆոններից օգտվողների մշտական գանգատները գլխացավերից, ականջացավերից, մաշկի գրգռումից, տեսողության խանգարումներից, գլխապտույտից և սրտխառնոցից/ <https://school-science.ru> /:

Սմարթֆոնները հատկապես վտանգավոր են երեխաների համար: Գերալդ Հայլենդը նշում է, որ դա պայմանավորված է նրանց ինունային համակարգի թերզարգացմամբ: Միաժամանակ կապ է հաստատված սմարթֆոններից օգտվող մարդկանց և գլխուղեղի ուռուցքների առաջացման միջև:

Շարադրվածից հետևում է, որ սմարթֆոնները վտանգավոր են մարդու առողջության համար: Այդպիսի հեռախոսներով օգտվողների շրջանում ուռուցքներով հիվանդանալու հավանականությունը մեծանում է 70%-ով: Մոտավորապես 3 անգամ մեծանում է լսողական նյարդի բարորակ ուռուցքով հիվանդանալու ռիսկը, հատկապես այն ականջի կողմում, որով սովորաբար խոսում են հեռախոսով:

Դպրոցականները սմարթֆոնները հիմնականում օգտագործում են խաղերի և ընկերների հետ շփման համար: Ամենից հաճախ օգտվում են sms ծառայություններից և ներդրված տեսախցիկից: Դա նրանց համար խաղային սարք է, որը ինտուիտիվ կերպով օգտագործվում է մյուսների հետ կապ ստեղծելու համար, այդ թվում՝ բջջայինի միջոցով ինտերնետի օգտագործումը: Այն երեխայի մեջ վերացնում է միայնության զգացումը՝ օգնելով խուսափել սթրեսից: Այս երևույթի հետևանքներն անմիջապես ի հայտ են գալիս նաև դասարանում. նահանջ է նկատվում առավելագույն ջանքերի պահանջի դեպքում, դժվարություններ են առաջանում գիտելիքի և փորձի կապը հաստատելիս, ցրվում է ուշադրությունը, և աշակերտը սկսում է կորցնել կենտրոնանալու ունակությունը, ինչպես նաև նվազում է հետաքրքրությունը վերացական, առօրյա կյանքին չառնչվող գիտելիքների նկատմամբ և այլն: Ումանց համար բջջային սարքավորումներն ինքնարտահայտման միջոց են: Առանց այդ առարկայի նրանք միայնություն ու դատարկություն են զգում: Ուստի, դպրոցներում սմարթֆոններ օգտագործելու արգելքը կարող է «լքվածության» զգացում առաջացնել, ինչի հետևանքով հատկապես դեռահասը կարող է ինքնամփոփ դառնալ ու մեկուսանալ աշխարհից:

1.2 Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը ուսուցման գործընթացում

Ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը շատ կարևոր է ուսուցումն անհատականացնելու համար: Սովորողները պետք է կարողանան ձեռք բերել, գնահատել, արժևորել և փոխանցել տեղեկությունները: Տեխնոլոգիաների կիրառման արդյունքում *զարգանում են սովորողների մտածողությունն ու համակարգչային գրագիտության հմտությունները*: Ուսուցման գործընթացում առավելագույն դիդակտիկ արդյունքի կարելի է հասնել միայն ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների համակարգված օգտագործման պայմաններում: Համակարգչային տեխնոլոգիաները, կրթական պաշարները, էլեկտրոնային ուսուցումը և տեղեկատվական կայքերն արդյունավետ չեն լինի, եթե նրանց կիրառումը կրի անջատ և ոչ նպատակամղված բնույթ:

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները ուսուցման գործընթացում ունեն իրենց կարևոր նշանակությունը, որոնք ուղղված են կրթության որակի բարձրացմանը: Ուսուցման մեթոդների ընտրությունը փոխվում է ժամանակին համընթաց, և ՏՀՏ-ների ներդրմամբ պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջանում վերանայելու ուսուցման բոլոր բաղադրիչները: Ուսուցման գործընթացում ՏՀՏ-ի ներդրումը հանգեցնում է էական փոփոխության՝ ավանդական մեթոդները փոխարինելով ժամանակակից մեթոդների, հնարների, համադրելով ավանդական ու ժամանակակից մեթոդները և այլն: Անդրադառնալով կենսաբանության դասավանդման արդյունավետության բարձրացման հիմնախնդրին՝ նշենք, որ առկա են ՏՀՏ-ների օգտագործման բազմաթիվ հնարավորություններ, որոնք մեծապես նպաստում են սովորողների կողմից կենսաբանական լայնածավալ տեղեկատվության դյուրին յուրացմանը: Ուստի հաշվի առնելով տվյալ առարկայի դիդակտիկական նպատակներն ու յուրահատկությունները՝ նաև մեր դիտարկումների հիման վրա առանձնացրել ենք համակարգչային ծրագրերի հետևյալ տեսակները՝ վարժանքային, ցուցադրական, ուսուցողական, տեղեկատվական, մոդելավորման և մուլտիմեդիա ծրագրեր: ՏՀՏ բաղադրատարրերը, ըստ դիդակտիկական ուղղվածության, առանձնացրել ենք հետևյալ խմբերում՝

1. նյութեր, որոնք նախատեսված են ուսումնական նյութի նախնական ծանոթության, արդյունավետ ընկալման համար (համակարգչային տեքստեր, լուսանկարներ, տեսասկավառակներ),
2. էլեկտրոնային դասագրքեր, կիրառական ծրագրերի և թեստերի փաթեթներ, որոնց դիդակտիկական հիմնական գործառույթներն են սովորողների գիտելիքների ամրապնդումն ու ստուգումը,
3. վիրտուալ լաբորատորիաներ և համակարգչային լսարաններ, որոնցում իրականանում են ուսումնասիրվող գործընթացները, այդ միջոցների դիդակտիկական հիմնական նշանակությունը սովորողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացումն է,
4. մասնագիտական գործունեության ավտոմատացված համակարգեր և կիրառական այն ծրագրերը, որոնք ուսանողների կողմից կարող են օգտագործվել ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ տարբեր աշխատանքներում, այն իրականացվում է որպես ազատ հետազոտություն:

SՀS բաղադրատարրերի վերը դասակարգված խմբերի գործառութային նշանակությունը համապատասխանում է սովորողների իմացական գործունեության կազմակերպման փուլերի հիմնավորված հաջորդականությանը՝ *ընկալում, գիտելիքների իմաստավորված յուրացում և ամրապնդում, անձնական փորձի ձևավորում (կարողություններ, մասնագիտական հմտություններ), հետազոտական ու որոնողական գործունեություն:*

Ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը շատ կարևոր է ուսուցումն անհատականացնելու համար: Սովորողները պետք է կարողանան ձեռք բերել, գնահատել, արժևորել և փոխանցել տեղեկությունները, այս դեպքում տեխնոլոգիաները նպաստում են, օրինակ, որ սովորողները բանավիճեն, քննարկեն, սեփական կարծիք արտահայտեն և այլն: Տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ զարգանում են սովորողների մտածողությունն ու համակարգչային գրագիտության հմտությունները, օրինակ՝ համակարգչով գրելու դեպքում սովորողներն ավելի ինքնավստահ են: Տեխնոլոգիան կարող է նաև զարգացնել սովորողների գեղարվեստական հմտությունները. տեսաժապավենների ստեղծումը, թվային լուսանկարչությունը և այլ միջոցներ նպաստում են սովորողների գործունեության գեղարվեստական արտահայտչականության բարձրացմանը: Այն սովորողներին հնարավորություն է տալիս իմաստավից աշխատանք կատարելու: Սովորողները

կարիք ունեն ստեղծելու այնպիսի օգտակար հետազոտական աշխատանքներ, որոնք կարևոր արժեք կունենան նաև ուսումնական հաստատությունից դուրս:

. Աստվածատրյան Մ. , Թերզյան Գ. , Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում, Երևան, 2004: Баранов А.С., Суслов В.Г., Шейнис А.И., Компьютерные технологии в школьной географии.Изд.дом. «Геттер», 2004, 80 с

Գլուխ 2

SS-ի ազդեցությունը սովորողների հոգեբանական զարգացման վրա և դրանց բացահայտումը ուսուցման գործընթացում

2.1 Դպրոցահասակների անձի զարգացման հիմնական օրինաչափություններն ու առանձնահատկությունները

Յուրաքանչյուր ուսուցիչ մանկավարժ իր գործունեության ընթացում հանդիպում է աշակերտների տարիքային զարգացման օրինաչափությունների ճանաչման և դրանցով առաջնորդման խնդրին, ինչը կարող է նպաստել ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը:

Ուսումնական գործունեության ընթացքում ուսուցիչը հանդիպում է այն փաստին, որ յուրաքանչյուր աշակերտ ունի իր անհատական աշխատանքի ոճը, իր ուրույն բնավորությունն ու խառնվածքը, աշխատանքի տեմպը և այլն: Այդպիսի անհատական առանձնահատկությունների ընդունելնու հաշվի առնելը օգտակար է ուսումնական դժվարությունների լուծման ժամանակ և խթանում է ուսումնական գործընթացը:

Կրտսեր դպրոցական տարիքը անձի կայացման կարևորագույն փուլերից մեկն է, որի ընթացքում տեղի է ունենում անհոգ մանկությունից անցում այնպիսի մի շրջանի, երբ անհրաժեշտություն է ծագում նոր դերեր կրել, պատասխանատու լինել, տարբեր պահանջներ իրականացնել: Այս շրջանում հակասության մեջ են մտնում երկու հիմնական դրդապատճառ՝ անհրաժեշտության և ցանկության: Մի կողմից, առաջնորդվելով անհրաժեշտության պահանջունքով, երեխան բացահայտում է հասուն կյանքը, իսկ մյուս կողմից, դրդված լինելով ցանկության պահանջունքով, երեխան ցուցաբերում է այնպիսի վարք, որը վերադարձնում է իրեն մանկության աշխարհ, որտեղ ամենը ապահով է, ծանոթ, իրականանալի, չկան որոշակի պարտականություններ և պահանջներ: Մի կողմից, երեխան իմպուլսիվ է, անհանգիստ, ունի ոչ կայուն ուշադրություն, իսկ մյուս կողմից, քանի որ նրա մոտ

արդեն ձևավորվում է պահանջմունքների նոր մակարդակ, նա սկսում է գործել, առաջնորդվելով որոշակի նպատակներով, արժեքներով, զգացմունքներով: Կրտսեր դպրոցականի զարգացման ընթացքում հստակ երևում են զարգացման որակական փոփոխություններ: Երեխայի հոգեկան զարգացման կենտրոնում է հայտնվում *կամաժինության* ձևավորումը /պլանավորում, գործողությունների զարգացման ծրագիր, վերահսկողության իրականացում/:

Դպրոցահասակ տարիքի մեկ այլ կարևոր շրջան է *դեռահասությունը*, որի ընթացքում տեղի է ունենում երեխայի օրգանիզմի վերակառուցում, փոփոխություններ, որոնք նախապատրաստում են երեխային սեռական, ֆիզիկական և հոգեկան հասունության:

Սեռական հասունացման առաջին փուլում սեռական գեղձերի ակտիվությունը ետ է մնում էնդոկրին գեղձերի աշխատանքից, ինչով էլ պայմանավորվում է նյարդային համակարգի անհավասարակշիռ վիճակը, որն ազդում է երեխայի վարքի վրա: Մի կողմից, դեռահասները ընդունակ են ինքնակառավարման, քննադատական մոտեցման, մյուս կողմից՝ նյարդային համակարգի գրգռականությունը գերիշխում է արգելակման գործընթացի վրա, և դեռահասը կարող է բուռն և կտրուկ արձագանքել արտաքին ազդակներին: Դեռահասները կարող են շատ անտարբեր լինել արտաքին իրադարձությունների հանդեպ, քանի որ խորասուզված են իրենց փոփոխվող ներաշխարհի մեջ: Երկրորդ փուլում սկսում են հասունանալ երկրորդական սեռական հատկանիշները, փոխվում է վերաբերմունքը հակառակ սեռի նկատմամբ:

Այս շրջանը ներքին կոնֆլիկտային, հակասական հոգեվիճակի շրջան է, որը սեփական մարմնի նախկին պատկերի կորստի և նոր ֆիզիկական Ես-ի ձևավորման արդյունք է: Երեխայի ուշադրությունը սևեռվում է մարմնական փոփոխությունների վրա, որոնք երբեմն շատ ցավազին և հիվանդազին են ընկալվում: Դեռահասը դառնում է չափազանց զգայուն իր արտաքինի հանդեպ, դյուրագրգիռ և անհանգիստ:

Թորգոմյան Լ.Վ.. Մանկավարժության ընդհանուր հիմունքներ, -Եր.: Տոներ, 2005, -135 էջ:

Педагогика: учебник для вузов по пед. специальностям: доп. М-вом образования и науки РФ / [Л. П.

Крившенко и др.]; под ред. Л. П. Крившенко. – Москва: Проспект, 2010. – 432 с. /էջ 15-27/

2.2 Սովորողների հոգեբանական զարգացման վրա ՏՏ-ի դրական և բացասական ազդեցությունների գնահատում և նախազգուշացնող միջոցառումների կազմակերպում

Հետազոտության վայրը – Հետազոտական մասը իրականացվել է Ալ. Բլոկի անվան հ. 122 հիմնական դպրոցում կենսաբանության դասընթացին: Հետազոտությունը իրականացրել են 8-րդ դասարանի աշակերտները, ուսումնասիրելով երեխաների տարբեր տարիքային խմբերի նյարդահոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները:

Հետազոտվող անձանց քանակը՝ 100 աշակերտ:

Հետազոտվող անձանց տարիքը՝ հիմնական դպրոցի աշակերտներ:

Ուսումնասիրման նպատակը – բացահայտել ամենատարածված պատճառները, որոնք առաջացնում են դպրոցականների մոտ համակարգչային կախվածություն և ազդում նրանց հոգեկան գործընթացների վրա:

Հետազոտության մեթոդները

Հարցում google forms ծրագրի միջոցով/<https://docs.google.com/forms/>

Հարցման վերլուծություն և ընդհանրացում


Համակարգչային կախվածության ուսումնասիրման համար կիրառել ենք հարցարան (Հեղինակ՝ Խաչատուր Գասպարյան (Միխիթար Հերացու անվան ԵՊԲՀ բժշկական հոգեբանության ամբիոնի վարիչ, դոցենտ)):

Հետազոտության ընթացքը և արդյունքները


Երեխաների մոտ համակարգչային կախվածության առկայությունը պարզելու համար հարցումը կիրառել ենք Խ. Գասպարյանի հարցարանը: Ստացել ենք այսպիսի արդյունքները

Գծապատկեր 1
Գծապատկեր 2

1. Նստելով համակարգչի առջև կամ ցանցում գտնվելիս որքա՞ն հաճախ եք ակտիվանում, թեթևանում և բավականություն ստանում:




2. Որքա՞ն հաճախ եք համակարգչի աշխատանքը ինքնուրույն դադարեցնում կամ ցանցից դուրս գալիս:




Գծապատկեր
Գծապատկեր 4

3

3. Որքա՞ն հաճախ եք նյարդայնանում, տխրում կամ դատարկություն զգում առանց համակարգչի, հեռախոսի կամ ցանցի:




4. Տրամադրության բարելավման կամ կյանքի դժվարություններից խուսափելու համար որքա՞ն հաճախ եք պահանջ զգում համակարգչի առջև վերահառնալու կամ ցանցում գտնվելու համար:




Գծապատկեր 6

5. Համակարգչով աշխատելու կամ ցանցում գտնվելու պատճառով որքա՞ն հաճախ եք խուսափում ընտանեկան, հասարակական, աշխատանքային կամ ուսանելու պատասխանատվություն ից:



6. Որքա՞ն հաճախ եք ստում, երբ հարցնում են համակարգչի կամ հեռախոսի առջև անցկացրած ժամանակի վերաբերյալ:



Արդյունքները.

- ✓ Չարցվածների մոտ 70%-ի նշում են ,որ հաճախակի համակարգիչ կամ հեռախոս օգտագործելիս, ցանցերից օգտվելիս ՚բավականություն և թեթևություն զգացողություն են ունենում ,կտրվում են իրենց առօրյայից, ակտիվանում են: Մնացած 22%-ի մոտ այդ զգացողությունները մշտապես են, իսկ 8%-ը երբեք չեն զգացել վերեթվարկվածները:
- ✓ Չարցվածների 51%-ը նշում է ,որ մշտապես ինքնուրույն է դադարեցնում հեռախոսի կամ համակարգչի աշխատանքը և ցանցից դուրս գալիս , նրանց մոտ կամային որակները բարձր են: 41%-ը դադարեցնում է հաճախակի, բայց ոչ հեշտությամբ, իսկ 8% –ը դժվարանում է դադարեցնել աշխատանքը և չի կարողանում կտրվել ցանցից:
- ✓ Չարցվածների 89%-ը նշում է, որ առանց համակարգչի և հեռախոսի օգտագործման կախված իրավիճակից ունենում է դատարկության զգացողություն , լինում են տխուր և նյարդային: Մյուս 7%-ը նշել է ,որ միշտ է ունենում նման զգացողություններ առանց ցանցի օգտագործման, իսկ 4%-ը հաճախակի:


- ✓ Պատասխանելով այն հարցին ,թե որքան հաճախ են կարիք ունենում ցանցից օգտվելու ` տրամադրությունը բարելավելու և դժվարություններից խուսափելու համար` հարցվածների 60%-ը նշում է,որ պահանջ չի ունենում, 27-ը հաճախակի է ունենում,իսկ 11%-ը մշտապես :
- ✓ Հարցվածների 78%-ը նշում է ,որ ցանցից օգտվելու պատճառով չեն խուսափում `ըտանեկան,հասարակական,աշխատանքային պարտականություններից, 19%-ը պարբերաբար խուսափում են,իսկ 4%-ը մշտապես:
- ✓ Պատասխանելով այն հարցին,թե որքան հաճախ են ստում հեռախոսի կամ համակարգչի դիմաց անցկացրած ժամանակի մասին ,հարցվածների 98%-ը պատասխանել է ստում են կախված իրավիճակից, մնացած 2% -ը հաճախակի:

Ըստ հարցումի գնահատեցինք առաջացած բացասական հետևանքների տոկոսային հարաբերությունը տվյալ տարիքային խմբում:

60-ից 100%- չկա վտանգ ,ազդեցությունը մեծ չէ

30-ից 50%- առկա է որոշակի վտանգ

10-ից 20%-վտանգը մեծ չէ



Հիմնական դպրոցի տարիքի սովորողների այս խմբի 63%-ից ավելի մոտ SS-ի բացասական ազդեցությունը մեծ չէ և կախվածության մակարդակը ցածր է,31% -ի մոտ առկա է որոշակի ռիսկեր և պետք է իրականացնել կանխարգելիչ միջոցառումներ,իսկ 6% -ի մոտ վտանգը առկա է և ազդեցությունը բավականին մեծ:

Առաջարկություններ

Կատարված հետազոտության արդյունքների մշակումից հետո կարող ենք կատարել մի քանի առաջարկություններ.

1. Սովորողների հոգեբանական գործընթացների վրա SS-ի բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով՝ կազմակերպել քարոզչական միջոցառումներ ուսումնական տարբեր հաստատություններում, ծնողների հետ կազմակերպել սեմինար քննարկումներ, նախազգուշացնելով բջջային հեռախոսների ոչ գրագետ օգտագործման հետևանքների մասին:
2. Ուշադրություն դարձնել նրա զարգացման վրա՝ հոգեկան և ֆիզիոլոգիական: Խուսափելու համար նրա տարիքային զարգացման հապաղումից:
3. Սովորողների շրջանում հաճախ կատարել՝ դիտարկումներ, անցկացնել թեստեր և հարցումներ, պարզելով՝ SS-ի ազդեցությունների մակարդակը, որևէ հոգեբանական գործընթացի վրա:
4. Կազմակերպել մեդիագրագիտության դասեր սովորողների և նրանց ծնողների համար :

Եզրակացություն

Վերոգրյալից պարզ դարձավ.

- Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում դրական ներգործություն է ունենում սովորողների զարգացման և կրթության գործում: Այն ծառայում է որպես գիտելիքների համալրման, տեղեկատվության միջոց, մեդիագրագիտության կանոներով առաջնորդվելու դեպքում:
- Մեդիակրթական տեխնոլոգիաների օգտագործումը դպրոցում, կբերի ՏՏ-ի բացասական ազդեցության կրճատմանը սովորողների հոգեբանական զարգացման վրա:
- Հիմնական դպրոցի տարիքի հետազոտվածների 63%–ից ավելի մոտ ՏՏ-ի բացասական ազդեցությունը կապված չհոգեբանական զարգացման հետ, մեծ չէ և կախվածության մակարդակը ցածր է, 31% -ի մոտ առկա է որոշակի ռիսկեր և պետք է իրականացնել կանխարգելիչ միջոցառումներ, իսկ 6% –ի մոտ վտանգը առկա է և ազդեցությունը բավականին մեծ:

Գրականության ցանկ

1. Աստվածատրյան Մ., Թերզյան Գ., Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում, Երևան, 2004:
2. Թորգոմյան Լ.Վ.. Մանկավարժության ընդհանուր հիմունքներ, -Եր.: Տոներ, 2005, -135 էջ:
3. Ն.Կարապետյան. Հոդված/ ՄԵԴԻԱՎՐԹՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ/-Եր.-2018թ.
4. Պետրովսկի, Տարիքային և մանկավարժական հոգեբանություն: -Եր., 1974, էջ 27
5. Баранов А.С., Суслов В.Г., Шейнис А.И., Компьютерные технологии в школьной географии.Изд.дом. „Гептеръ, 2004, 80 с
6. Педагогика: учебник для вузов по пед. специальностям: доп. М-вом образования и науки РФ / [Л. П. Крившенко и др.]; под ред. Л. П. Крившенко. – Москва: Проспект, 2010. – 432 с. /էջ 15-27/
7. Педагогика: Учебное пособие для студ. пед. учеб. зав. /В. А. Слостенин, И. Ф. Исаев, А. И. Мищенко, Е. Н. Шиянов., -8-е изд. –М.:Академия. 2008. -566с /էջ112-129/.
8. <https://school-science.ru>
9. <https://docs.google.com/forms>
10. <https://muegn.ru/hy/fire-trucks/problemy-ispolzovaniya-novyh-tehnologii-v-obrazovanii-nauchno-metodicheskie.html>